ԳԻՏՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄ

ՀԵՆՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Միևնույն գործունեությունը կարելի է դիտել երկու համեմատաբար ինքնուրույն, բայց սկզբունքորեն միմյանց լրացնող չափումների մեջ՝ որպես գործունեության անմիջական իրականացում և որպես այն հիմքերի (նախադրյալների, սկզբունքների) վերլուծություն, որոնց վրա հենվում է այդ գործունեությունը։ Քանի որ մարդու բանական գործունեության կիրառման ձևերը որակապես բազմազան են, ուստի միշտ հարց է առաջանում դրանց ռացիոնալության մասին։ Ռացիոնալությունը բանականության կիրառումների բանական լինելու գնահատականն է և որպես այդպիսին ենթադրում է բանականության քննադատության այս կամ այն ձևը։ Ռացիոնալության պրոբլեմն առաջանում է քննադատական հատուկ դիրքորոշման հետևանքով, որն ուղղված է այն ոչ ակնհայտ, հաճախ չգիտակցված նախադրյալների հայտնաբերմանը, որոնց բացահայտումը թույլ է տալիս դատել գործունեության «բանական», «արժեքավոր», «նպատակահարմար» լինելու մասին, այսինքն հնարավոր է դարձնում ռացիոնալ գնահատել գործունեության արդեն իրականացված ձևերը։

Գիտական իմացության ոլորտում նշված քննադատական դիրքորոշումը բնորոշ է ավանդական իմացաբանությանը։ Որպես իմացության հիմնավորման ձև, իմացության տեսությունը նաև ռացիոնալության տեսություն է։ Ուստի, այստեղ առկա չէ ռացիոնալության առանձնապես արժեքավոր պրոբլեմը, որը մեկուսացած է «ընդհանրապես իմացության» հիմնավորման խնդիրներից։ Բայց այդ պրոբլեմը չի առաջանում նաև կոնկրետ-գիտական իմացության ոլորտում այնքան ժամանակ, քանի դեռ ռացիոնալությունը պատկերացվում է որպես գիտականության հոմանիշ։ Եթե հետազոտությունը համապատասխանում է ռացիոնալության որոշակի ստանդարտներին, ապա այն ռացիոնալ է։ Ռացիոնալության պրոբլեմի առաջադրման ժամանակակից ձևը, որով զբաղվում են փիլիսոփայական շատ դպրոցներ և ուղղություններ[1]*, առաջանում է ոչ այնքան ավանդական տեսական-իմացական դիրքորոշման մեջ կատարվող համապատասխան շտկումների, որքան մաթեմատիկայում, ֆիզիկայում և գիտության մյուս բնագավառներում տեղի ունեցող քննադատական ռեֆլեքսիայի «հանդիպական շարժման» պատճառով, որը սկսվել է անցյալ հարյուրամյակի վերջից՝ սեփական հիմնավորումների որոնման կապակցությամբ։ Թեպետ գիտական իմացությունը ռացիոնալ հիմնավորման միակ բնագավառը չէ, այնուամենայնիվ, հենց այն է հիմնականում ենթարկվում իռացիոնալիստական հարձակումներին։ Պատահական չէ, որ ժա-*

[1] Т. И. Ойзерман, Проблема рациональности и современный философский антиинтеллектуализм («Вопросы философии», 1979, № 2).

մանակակից իռացիոնալիզմն իր փաստարկներն ուղղում է գիտական իմացության հնգինակության վիժեցմանը, նրա «անբանականության» ապացուցմանը, որովհետև մարդկային ratio-ը գլխավորապես հենց այստեղ է դրսևորվում։

Սկսած պլատոնյան «Մենոնից» իմացության դասական սահմանումը կառուցվում է որպես ճշմարտության և արժանահավատության կոնյուկցիա[2]։ Իմացությունն անհնար է, եթե նրա մեջ չկա օբյեկտիվ բաղադրամասը՝ ճշմարտությունը, բայց վերջինս, որպես մտավոր պատկերացման և առարկայի համապատասխանություն, ինքնին դեռևս իմացություն չէ։ Դրա համար անհրաժեշտ է նաև ճանաչող անձի սուբյեկտիվ համոզվածությունը, թե ինքը գործ ունի ճշմարտության հետ։

Եթե իմացությունը ճշմարտության և արժանահավատության միասնությունն է, ապա իմացության հիմնավորման պահանջը ենթադրում է այն պայմանների մասնորոշումը, որոնց առկայությամբ ձեռք է բերվում նման միասնություն։ Ֆունդամենտալիզմը իբրև գիտության հիմնավորման դոկտրինա—արդյոք մենք այն կդիտենք որպես հիմնավորման իմացաբանական դոկտրինա «մաքուր ձևով»[3], թե որպես հիմնավորման մեթոդաբանական ծրագիր գիտության այս կամ այն բնագավառում (Ֆրեգե-Ռասսելի «լոգիցիզմը», էլեմենտարության կոնցեպցիան ֆիզիկայում, մաթեմատիկայի հիմնավորման Դիլբերտի ծրագիրը, բարդ նախադասությունները տարրական բազիսային նախադասությունների վերածվելու առավել ընդհանրացված նեոպոզիտիվիստական դոկտրինան և այլն) — ամենից լավ է պատկերացնել որպես իմացության հիմնավորման բուն պահանջի մեջ ամփոփված հակասությունը լուծելու մի փորձ։

Ամեն մի իմացություն պահանջում է հիմնավորում։ Դա նշանակում է, որ այն իր հիմքում ենթադրում է ինչ-որ մեկ ուրիշ իմացություն, որին ինքը պետք է հանգի։ Բայց քանի որ այդ ուրիշ իմացությունը նույնպես իմացություն է, ուստի ստացվում է, որ կամ մենք հիմնավորման մեր պահանջով ընկնելու ենք անվերջանալի ռեգրեսի մեջ կամ պետք է ինչ-որ տեղ կանգ առնենք։ Ֆունդամենտալիզմը փորձում է ընդհատել առաջացող ռեգրեսը՝ սահմանելով իմացության վերջնակետային սահման (հիմք), որն արտահայտվում է վերջնական բազիսային նախադասությունների ձևով, որոնցից արտածվում են գիտության մնացած բոլոր նախադասությունները, բայց որոնք, ըստ սահմանման, ոչ մի բանից չի կարելի բխեցնել։ Նման բազիսային նախադասություններին ներկայացվող անհրաժեշտ պահանջներն են՝ ինքնահիմնավորվածությունը, անմիջական ակնհայտությունը, բացարձակ արժանահավատությունը։

Ֆունդամենտալիզմի դոկտրինայի առաջին քննադատները սկեպտիկներն էին, որոնք ընթացան ֆունդամենտալության մասին թեզիսների և իմացության հիմքի անսխալականությունը վիժեցնելու ուղիով[4]։ Սկեպտիկների խնամքով մշակված փաստարկը նպատակ ուներ ցույց տալ, որ բազիսային նախադա-

---

[2] Платон, Менон, Соч., т. I, М., 1968, с. 407.

[3] R. Chisholm, Perceiving, Ithaca, 1957; J. Pollock., Knowledge and Justification, Princeton, 1974.

[4] Секст Эмпирик, Соч., т. II, М., 1976, с. 240.

սությունների վկայակոչումը արհեստականորեն կանգնեցնում է ռեգրեսը դեպի անվերջանալիություն, ուստի իմացության հիմնավորման պահանջի հարցում regressus ad infinitum-ի միակ երկընտրանքը կարող է լինել կամայական կոնվենցիան։

Թեպետ սկեպտիկների փաստարկները վերացական բնույթ էին կրում, այնուամենայնիվ, դրանք ժամանակ առ ժամանակ բավականաչափ էմպիրիկորեն էին հաստատվում նոր և առանձնապես նորագույն ժամանակի գիտության զարգացման պատմության կողմից։ Ամեն անգամ, երբ «նորմալ» գիտությանը փոխարինելու էր գալիս արմատական հեղափոխական տեղաշարժերի ժամանակը, խախտվում, իսկ այնուհետև խորտակվում էր հավատը անվերապահ արժանահավատության և իմացության հիմքի անսխալականության նկատմամբ։ Այդպիսի ժամանակաշրջաններում սկեպտիկական վերացական փաստարկների էմպիրիկ հաստատումներն այնպիսի կործանիչ հարվածներ էին հասցնում ֆունդամենտալիզմի որոշակի դոգմատիկ ձևերին, որ վերջիններիս հետ միասին խորտակվում էին իմացության դասական իդեալները՝ անվերապահը իր տեղը զիջում էր պայմանականին և հարաբերականին, արժանահավատությունը՝ հավանականին, ճշմարիտը՝ ճշմարտանմանին։ Սխալ կլիներ պնդել, թե դոգմատիկ ֆունդամենտալիզմի ավերակների տակ վերջնականապես թաղվեց ֆունդամենտալիզմի բուն գաղափարը։ Բայց այժմ նրա դեմ առաջանում է լուրջ «մրցակցող ծրագիր»՝ անտիֆունդամենտալիզմը, որն ամենից լավ, թեև ոչ ամբողջությամբ, ներկայացնում է ժամանակակից ֆալլիբիլիզմը (fallible—սխալ)։

Ֆալլիբիլիզմը[5] դասական սկեպտիցիզմի և ագնոստիցիզմի ժառանգորդն է, որն իր նախորդների փաստարկներն ինտեգրում է կոնկրետ-գիտական իմացության նորագույն արդյունքների հետ։ Ֆալլիբիլիստական հակազդումը ֆունդամենտալիզմին զարգացել է իմացության դասական սահմանման քննադատության, անմիջական իմացության՝ որպես բազիսային նախադասությունների ստացման պայմանի ժխտման, հասկացությունների առաջացման էմպիրիկ տեսության, «անալիտիկի-սինթետիկի» երկճյուղավորման, ինդուկտիվիզմի՝ որպես իմացության հիմնավորման մեթոդաբանության, և ֆունդամենտալիզմի այլ «սյուների» քննադատության ուղիով։

Էմպիրիզմի դոգմաներից մեկի՝ «անալիտիկի-սինթետիկի» երկճյուղավորման քննադատությունն իրականացվում է այն փաստարկի համապատասխան, ըստ որի ցանկացած նախադասության կառուցվածքում կոնցեպտուալ և էմպիրիկ բաղադրամասերն անհնարին է անջատել միմյանցից. ուստի չի կարելի խոսել այն կանոնների մասին, որոնք տրամաբանորեն արտահայտում են անհրաժեշտ ճշմարտություններն (անկախ ֆակտուալ ճշմարտություններից) և ընդհակառակն[6]։ Եթե չկան զուտ անալիտիկ ու զուտ սինթետիկ ճշմարտություններ և եթե սինթետիկ ճշմարտությունները կախված են ոչ միայն «զուտ փորձի» փաստերից, հետևաբար անհնարին են նաև բաղիսային նախադասությունները։ Իսկ եթե անհնարին են բաղիսային նախադասությունները, որոնք ունեն ex definitio սինթետիկ բնույթ, այդ դեպքում անհնար է

[5] J. Kekes, Fallibilism and Rationality („American Philosophical Quarterly", 1972, № 9, p. 301).

[6] W. Quine, From a logical point of view, Cambridge, 1953.

նաև իմացության անպայմանորեն արժանահավատ հիմքը (ֆունդամենտը)։ Որքան ավելի համոզիչ են ֆալլիբիլիստների փաստարկները, այնքան ավելի լայն են հեռանկարները սկեպտիկական եզրակացությունների և իռացիոնալիզմի համար։ Չէ որ, եթե ratio-ի կիրառումը զուրկ է արժանահավատ հիմքից, այդ դեպքում նշանակություն չունի, թե որքանով էֆեկտիվ կլինեն այդպիսի կիրառման արդյունքները։ Սկեպտիկի համար կարևոր է նման պայմանական դատողության անտեսեցեցեցեցը, քանի որ ֆունդամենտալ նախադրյալների ռացիոնալ հիմնավորման անհնարինությունը կասկածի տակ է դնում իմացության բուն պրոցեսը, իսկ դա լիովին բավական է որպեսզի այդպիսի պրոցեսի արդյունքները ևս դառնան կասկածելի։ Այդ պատճառով նույնիսկ գիտության ակնհայտ առաջադիմությունը և նրա ակներև գործնական արժեքը չեն դառնում այն փաստարկը, որը կզսպի սկեպտիցիզմի և իռացիոնալիզմի փթթուն ծաղկումը ժամանակակից բուրժուական փիլիսոփայության մեջ[7]։

Այսպիսով, սկեպտիկական ֆալլիբիլիզմը անմիջականորեն հանգում է իռացիոնալիզմի, ֆիդեիզմի և էպիստեմոլոգիական անարխիզմի[8]։ Սակայն ֆալլիբիլիստների մի մասը փորձում է խուսափել սկեպտիկական և իռացիոնալիստական ուղղակի եզրակացություններից, ֆունդամենտալիզմի քննադատությունը շաղկապելով ռացիոնալության նոր տեսությունների որոնումների հետ։ Կ. Պոպերի կոնցեպցիան, ինչպես և նրա «քննադատական ռացիոնալիզմը» ամենից առաջ կարելի է հասկանալ որպես «երրորդ ուղու» որոնում ֆունդամենտալիզմի՝ Սցիլլայի և սկեպտիկական ֆալլիբիլիզմի՝ Խարիբդայի միջև։

«Քննադատական ռացիոնալիստների» տեսակետից «ռացիոնալություն» հասկացությունը ֆունդամենտալիստական էպիստեմայի շրջանակներում մեկնաբանվում է դոգմատիկորեն՝ ռացիոնալ են միայն այն համոզմունքները, որոնց ճշտությունը կամ հավանականությունը ապացուցված է փաստարկման հուսալի մեթոդներով։ Վերջիններիս հուսալիությունը որոշվում է ռացիոնալության կիրառվող ստանդարտներով։ Ընդունելով ռացիոնալության այս կամ այն ստանդարտները («պարզ» և «հստակ» գաղափարները, ինքնաակնհայտ աքսիոմաներից բխելիականության դեդուկտիվ իդեալը, «տվյալից» ելնելու էմպիրիկ պահանջը, արձանագրային նախադասությունների նկատմամբ ռեդուկցիայի տրամաբանա-պոզիտիվիստական վաղ սկզբունքը և այլն), «դոգմատիկ ռացիոնալիզմը» չի դնում ռացիոնալության ստանդարտների ռացիոնալության հարցը[9], որովհետև, եթե ռացիոնալությունը ռացիոնալության ստանդարտների բավարարումն է, ապա ստանդարտներն իրենք չեն կարող ռացիոնալ լինել, քանի որ դրանց համար կպահանջվեն նոր ստանդարտներ, ուստի այստեղ կրկին սկսվում է անվերջանալի ռեգրեսը։ Հենց որ ռացիոնալության ջաստիֆիկացիոն կոնցեպցիան ընկնում է «հիմնավորման պարադոքսի» ցանցի մեջ, նա ընտրություն չի կարողանում կատարել regressus ei infinitum-ի և կամայական համաձայնության միջև, որը և «դոգմատիկ

---

[7] P. Unger, Ignorance, Oxford, 1975.

[8] А. Огурцов, Образы науки в буржуазном общественном сознании («Философия и наука», М., 1972).

[9] J. Watkins, Comprehensively critical rationalist („Philosophy", 1971, v. 46, № 175).

ռացիոնալիզմը» հեշտ խոցելի է դարձնում ֆալլիբիլիստական քննադատության համար։

«Անալիտիկ ռացիոնալիզմը», ի տարբերություն «դոգմատիկ ռացիոնալիզմի», փորձում է պարադոքսը շրջանցել՝ իմաստից զուրկ հայտարարելով ստանդարտների ռացիոնալության բուն հարցը։ «Ռացիոնալություն» հասկացությունը իմաստալից է միայն որոշ ստանդարտների վերաբերյալ, ուստի հարց բարձրացնել ռացիոնալության ստանդարտների ռացիոնալության մասին, միևնույն է, թե հարցնել՝ ստանդարտ մետրը երկարության ռա՞ալ մետր է արդյոք[10]։ Թեև նման հակափաստարկը ճիշտ է արտահայտում «ռացիոնալություն» և «ռացիոնալության ստանդարտներ» հասկացությունների փոխադարձ անալիտիկ կապը, այնուամենայնիվ, այն ի վիճակի չէ հերքելու ռացիոնալության ստանդարտների կոնվենցիոնալ բնույթի վերաբերյալ սկեպտիկական թեզիսը։

Հաճախ նման փաստարկը կոմբինացվում է Վիտգենշտեյնի «կյանքի ձևեր» հասկացության հետ՝ կազմելով ռացիոնալության բավական տարածված կոգերետ տեսությունը։ Այդ տեսության համաձայն, ռացիոնալությունը կոնտեքստից կախված «ներսիստեմային հատկություն» է, ուստի իմաստալից է միայն որոշակի «կյանքի ձևերի» ներսում (իսկ դրանք բազմազան են՝ գիտությունը, արվեստը, առասպելը, կրոնը, մոգությունը, օլիմպիական խաղերը և այլն)։ Հետևել «կյանքի ձևերին», նշանակում է հետևել այն կանոններին, հասկացություններին և ստանդարտներին, որոնք յուրահատուկ են տվյալ ձևի համար։ Անհնար է ռացիոնալության ստանդարտները կիրառել «կյանքի ձևերի» նկատմամբ, քանի որ այդպիսի կիրառումը ենթադրում է ուրիշ «կյանքի ձև», իսկ դրանց միջև ընդհանուր ոչինչ չկա։ Օրինակ, գիտությունը և կրոնը տարբեր «կյանքի ձևեր» են։ Ռացիոնալության սպեցիֆիկ ստանդարտները մատնանշում են «տրամաբանականության» կամ «անտրամաբանականության» նշանակությունն այդ ձևերից յուրաքանչյուրի ներսում։ «Բայց մենք չենք կարող գիտակցաբար պնդել, թե գիտությունը կամ կրոնը ինքնին տրամաբանական կամ անտրամաբանական են. դրանք արտատրամաբանական են»[11]։

Եթե «կյանքի ձևերի» միջև չկա ընդհանուր ստանդարտ, ապա դժվար է դրանք համեմատել (նույնացնել և տարբերել)։ Այդ դեպքում այն պնդումը, թե «գիտությունը և կրոնը արտատրամաբանական են», անհնար կլիներ առանց նույնացնելու և վերանալու տարբեր «կյանքի ձևերից»։ Եթե այդ պնդումը հնարավոր է, ապա հակասական է, քանի որ գաղտնի ընդունում է այն, ինչը բացահայտորեն հերքում է։ (Ինքը՝ Լ. Վիտգենշտեյնը փորձում էր բացառել սոլիպսիզմի առաջացող իմպլիկացիան, «կյանքի ձևեր» հասկացության հետ մեկտեղ մտցնելով «ընտանեկան նմանություններ» հասկացությունը)[12]։

---

[10] J. Bennett, Rationality, London, 1964.

[11] P. Winch, The Idea of a Social Science, London, 1958, p. 101.

[12] Г. П. Григорян, Решает ли концентрация «семейных сходств» проблему универсалий? («Межвузовский сборник по общественным наукам. Философия», вып. I, Ереван, 1977).

«Քննադատական ռացիոնալիզմը», ի տարբերություն «դոգմատիկ» և «անալիտիկ» ռացիոնալիզմի, որպես ռացիոնալության նմուշ է ընդունում բնագիտության աճի փաստը, որի հիմքում, ըստ Պոպերի, ընկած է ենթադրությունների և հերքումների «մեխանիզմը»։ Մասնագիտական գրականության մեջ «քննադատական ռացիոնալիզմը» հաճախ կապում են այն բանի հետ, որ գիտության նեոպոզիտիվիստական փիլիսոփայությունը փոխարինել է նոր, «պոստպոզիտիվիստական փիլիսոփայությանը»[13]։

Նեոպոզիտիվիզմի մեջ տեսականի և էմպիրիկականի հարաբերակցության կանոնը գիտական տեսությունը դարձնում է ինքնամփոփ «խստությամբ սահմանված սխեմա», կանգ առած, ժամանակից դուրս գտնվող, դոգմատիկորեն հավերժացված ինչ-որ բան[14]։ Պոպերի ֆալսիֆիկացիայի սկզբունքը այդ քարացած—կանգ առած հարաբերության մեջ անհրաժեշտաբար մտցնում է ձևավորման, զարգացման մոմենտ, հենց որ փորձի այս կամ այն փաստի միջոցով ֆալսիֆիկացիայի է ենթարկվում տեսությունը, ապա դա տեսությունը դարձնում է անվերջանալիորեն զարգացող շարքի պայմանական, հարաբերական, հավերժաբար փոխանցվող տարր։ Ուստի, ֆալսիֆիկացիայի ենթարկվելու ունակությունը իմացության աճի, ավելի նոր ու համարձակ կարծիքների առաջքաշման անհրաժեշտ պայման է։ Եթե ֆալսիֆիկացիայի ենթարկվելու ունակությունը ռացիոնալության չափանիշն է, ապա իմացության աճի պոպերյան դոկտրինան չի՞ դառնա արդյոք միմյանց փոխարինող սխալ տեսությունների կուտակում։ Նման հայացքն ուղղակի հանդեցնում է սկեպտիցիզմի և իռացիոնալիզմի։ Ուստի, Պոպերը կիրառում է «ճշմարտանմանության» հասկացությունը՝ որպես տեսությունների ճշմարիտ և սխալ բովանդակության հարաբերակցության աստիճաններ։ Ըստ Պոպերի, վերջիններս կարող են լինել ավելի կամ պակաս ճշմարտանման, բայց դրանցից ոչ մեկը չի կարող լինել ճշմարիտ կամ արժանահավատ։ Պոպերը գտնում է, որ ճշմարտության որոնումը դոնկիխոտություն է, որովհետև ճշմարտությունը անհասանելի իդեալ է։ Ուստի՝ պետք է ընդունել, որ մոլորությունների անխուսափելիությունը բանականության արմատական պակասավորության վկայությունն է։ Ըստ նրա այս հարցում ևս ֆալլիբիլիզմը իրավացի է։ Սակայն. շարունակում է Պոպերը, բանականության պակասավորությունը դեռևս չի նշանակում նրա լիակատար սնանկացում։ Թեպետ բանականությունը պակասավոր է, «ռացիոնալությունը» դեռևս կարող է փրկվել։ «Փափուկ» ֆալլիբիլիզմը չի հանգեցնում «կոշտ» ֆալլիբիլիզմի։ Սխալներն անխուսափելի են, բայց մենք կարող ենք դրանց հիման վրա սովորել, հետևելով ենթադրությունների ու հերքումների մեթոդին, որին ենթակա է գիտական զարգացման տրամաբանությունը[15]։

«Ռացիոնալությունը փրկելու» օպերացիան, որը սկսել էր Պոպերը և շարունակել էին նրա հետևորդները, ավարտվեց, այժմ արդեն կարելի է ասել

---

[13] St. Toulmin, From Form to Function: Philosophy and History of Science in the 1950-s and now („Daedalaus", 1977, № 3, vol. 106); K. Popper, Conjectures and Refutations, London, 1963.

[14] St. Toulmin, Նշվ. աշխ.։

[15] K. Popper, Նշվ. աշխ., էջ 138։

որոշակիությամբ, լիակատար ձախողումով[16]։ Այստեղ էականը ոչ միայն այդ ձախողման արտաքին նշաններն են, որոնք արտահայտվել են, օրինակ, իռացիոնալիզմի մեջ փոխադարձ մեղադրանքներով (Պոպերի, Ուոտկինսի, Խոլտոնի, Ագասիի, Կունի, Լոկատոսի «ամոթխած իռացիոնալիզմը») և նույնիսկ ոչ էլ Մ. Պոլյանիի, Պ. Ֆոյերբանդի բացահայտ, «լկտի իռացիոնալիզմը, այլ այն, որ գիտության պատմության ռացիոնալ վերակառուցման ոչ մի փորձ ի վիճակի չէ ազատվելու «իռացիոնալիստական հնարաններից», եթե զարգացող գիտության «տրամաբանությունից»· արտաքսենք օբյեկտիվ ճշմարտության հասկացությունը։

Թեպետ Պոպերը հաճախ է դիմում ճշմարտությանը, սակայն այն նրա կողմից փաստորեն «վտարված է» իմացական պրոցեսից՝ շարունակ հայտնվելով գիտության ռեալ զարգացման մյուս կողմում։ Մենք գիտենք, դատում է նա համապատասխանության դասական տեսության ոգով, թե ինչպիսին պիտի լինի ճշմարիտ տեսությունը. այն պետք է լինի ռեալության օրինակ, որը նույնականորեն համապատասխանում է այդ ռեալությանը (ռեալության ֆրագմենտին)։ Բայց ոչ ոք ի վիճակի չէ իմանալու, ավելացնում է նա ագնոստիցիզմի ոգով, կարո՞ղ է արդյոք տեսությունն իրոք ճշմարիտ լինել, թե՞ ոչ։ Ճշմարտությունը, ըստ Պոպերի, հնարավոր է միայն որպես բացարձակ ճշմարտություն և որպես այդպիսին այն սկզբունքորեն անհասանելի է։ Նման մեկնաբանությունը ճշմարտությունը վերածում է միանգամայն ապարդյուն հասկացության։ Հենց այսպիսի եզրակացության հանգեցին Պոպերի հետևորդները, թեպետ Պոպերն այդ եզրակացությունը չի անում՝ բացարձակ ճշմարտությանը վերագրելով ռեգուլյատիվ իդեալի բնույթ, որին ասիմպտոտիկ կերպով ուղղված է իմացության աճը։ Պոպերը հասկանում է, որ եթե իմացության աճը զրկվում է առաջընթացի ուղղվածությունից, ապա «գիտական զարգացման տրամաբանություն» արտահայտությունը զրկվում է ռացիոնալ իմաստից։ Սակայն խնդիրն այն է, որ Պոպերը «ռացիոնալությունը» բխեցնում է իռացիոնալ ճանապարհով՝ ճշմարտության, որպես տրանսցենդենտ ռեգուլյատիվ իդեալի, և իմացության էվոլյուցիոնորեն մեկնաբանվող աճի միջև եղած կապը ձեռք է բերում բացահայտ աստվածաբանական բնույթ։ Այս հանգամանքը ճիշտ է ընդգծել Տ. Կունը, բայց միայն այն նպատակով, որպեսզի ճշմարտությունն ամբողջությամբ դուրս դցի զարգացող գիտությունից։ «Մենք իրո՞ք,— գրում է նա,— պետք է ընդունենք, որ գոյություն ունի մի ինչ-որ ամբողջական, օբյեկտիվ, ճշմարիտ պատկերացում բնության մասին և գիտական նվաճման պատշաճ չափանիշը համարվում է այն աստիճանը, որով այն մեզ մոտեցնում է այդ նպատակին»[17]։ Ժխտելով իմացության աճի նպատակասլաց և կոմուլյատիվ բնույթը, Տ. Կունը հպարտանում է նրանով, որ իր գլխավոր աշխատության մեջ «ճշմարտություն» տերմինը հիշատակվել է «Միայն Ֆրենսիս Բեկոնից վերցրած քաղվածքում»[18]։ Արժե արդյոք զարմանալ, որ իռացիոնալիզմի մեջ մեղադրվելուց խուսափելու Կունի բազմաթիվ փորձերը (որոնք կապված են, մասնավորապես, պարադիգ-

---

16 Б. И. Пружинин, Проблема рациональности в англо-американской «философии науки» («Вопросы философии», 1978, № 6).

17 Т. Кун, Структура научных революций, М., 1977, с. 240.

18 Նույն տեղում։

մաների միջև ընտրությունը բացատրելու անընդունակության հետ, կոնվենցիոնալիզմը, որը հանդես է գալիս «գիտական խմբակցությանը»՝ որպես գերագույն դատավոր դիմելու ձևով այն բանի գնահատման հարցում, թե ինչը համարել ճշմարիտ, ապացուցված, ֆալսիֆիկացիայի կամ վերիֆիկացիայի ենթարկվող, «անհամաչափելիության» մասին թեզիսը, ռացիոնալության հանգեցումը գիտնականի սուբյեկտիվ գործունեությանը և այլն) ապարդյուն են։ Կունի միակ սփոփանքը կարող է լինել նրա սեփական այն դիտողությունը, որ եթե ինքը իռացիոնալիստ է, ապա իր քննադատները (նկատի ունի Լակատոսին) նույնպես իռացիոնալիստներ են[19]։

Վ. Ի. Լենինը ռելյատիվիզմ է անվանում այն տեսակետը, որը ճշմարտության մեջ բացարձակ է դարձնում հարաբերականը (պայմանականը, մոտավորը, ոչ ամբողջականը)։ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ նա բերում է «քննադատական ռացիոնալիստների» շրջանում շատ հանրածանոթ ֆրանսիացի ֆիզիկոս Պ. Դյուհեմի կարծիքը. «Ֆիզիկայի օրենքը, իսկն ասած, ճշմարիտ չէ և ոչ էլ կեղծ, այլ մոտավոր է»[20]։ «Այս «այլի» մեջ արդեն կա կեղծման սկիզբը, այն սահմանի ջնջման սկիզբը, որ գոյություն ունի օբյեկտը մոտավորապես արտացոլող, այսինքն՝ օբյեկտիվ ճշմարտությանը մոտեցող գիտական տեսության և կամայական, ֆանտաստիկ, զուտ պայմանական տեսության, օրինակ, կրոնի տեսության կամ շախմատային խաղի տեսության միջև»[21]։

Քննության առնված վեճը՝ ֆունդամենտալիզմի և ֆալլիբիլիզմի միջև, Լենինի մատնանշած բացարձակ և հարաբերական ճշմարտության դիալեկտիկայի մետաֆիզիկական աբերացիաների (անհարիրությունների) տիպիկ օրինակ է։ Եթե ֆունդամենտալիզմը իմացաբանական դոգմատիզմի ժամանակակից ձևն է, ապա ֆալլիբիլիզմը շարունակում է իմացաբանական ռելյատիվիզմի գիծը։

Այսպիսով, օբյեկտիվ ճշմարտության ժխտումը «քննադատական ռացիոնալիզմի» մեջ բավականաչափ հուսալի փոխհատուցում չստացավ առաջին պլան մղված ռացիոնալության պրոբլեմում։ Թեպետ ռացիոնալությունը կարող է հանդես գալ իբրև ինչպես ճշմարիտ, այնպես էլ սխալ տեսությունների (որոնք նույնպես կարող են կրել «ռացիոնալ հատիկներ») պրեդիկատ, այդուհանդերձ ճշմարտությունից զուրկ ռացիոնալության հասկացությունն ինքն է զրկվում ռացիոնալ իմաստից։ Այդ պատճառով «փափուկ ֆալլիբիլիզմը» անխուսափելիորեն հանգում է «կոշտ ֆալլիբիլիզմի». այսինքն՝ սկեպտիցիզմի և իռացիոնալիզմի։ Ի մի բերելով ֆալլիբիլիզմի և ֆունդամենտալիզմի միջև մղվող վեճը, Ի. Լակատոսը հետևյալ կերպ է գնահատում «քննադատական ռացիոնալիստների» հայացքները. «Նրանք գտնում են, որ պատմագրականորեն կարելի է «ֆալսիֆիկացիայի ենթարկելը» ցանկացած մեթոդաբանություն, ամեն մի ռացիոնալ վերակառուցում. գիտությունը ռացիոնալ է, բայց նրա ռացիոնալությունն անհնար է համապատասխանեցնել որևէ մեթոդաբանական կոնցեպցիայի ընդհանուր օրենքներին։ Ֆեյերաբենդը

---

19 «Структура и развитие науки. Из Бостонских исследований по философии науки», М., 1978, с. 281.

20 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 18, էջ 407։

21 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 18, էջ 407։

պնդում է, որ ոչ միայն չի կարող լինել ռացիոնալության ընդհանուր տեսություն, այլև ընդհանրապես գոյություն չունի այնպիսի երևույթ, ինչպես գիտական ռացիոնալությունը։ Այսպիսով, Պոլյանին հանգեց կոնսերվատիվ ավտորիտարիզմին, այն ժամանակ, երբ Ֆեյերաբենդը հանգեց սկեպտիկական անարխիզմին։ Կունը իր հերթին հակվեց դեպի ռացիոնալ հեղինակությունների իռացիոնալ փոխարինման խիստ յուրօրինակ կոնցեպցիան»[22]։

Գիտությանը՝ որպես ռացիոնալության «պարադիգմայի», դիմելը, առաջին հայացքից թվում է առավել «հեղինակավոր» մի փաստարկ սկեպտիցիզմի և իռացիոնալիզմի դեմ մղվող պայքարում։ Սակայն նման դիմումն ինքնին դեռևս ի վիճակի չէ հակադրվելու սկեպտիցիզմին, որի հերքումը միշտ (և իրավացիորեն) դժվար գործ է համարվել։ Ինչպես այն դեպքերում, երբ «գիտության ռացիոնալությունը» նույնականացվում էր նրա հիմքերի հիմնավորման հետ (ֆունդամենտալիզմ), այնպես էլ մյուս դեպքերում, երբ նրա որոնումները կապում էին գիտության զարգացման հետ, սկեպտիկական փաստարկները պահպանում էին իրենց համոզչությունը, փաստորեն մնալով անխոցելի։ Դա հանգեցնում է այն հետևությանը, որ «գիտության փիլիսոփայությունը» չի կարող լուծվել ոչ «գիտության տրամաբանության» (նեոպոզիտիվիստական ջաստիֆիկացիոնիզմ), ոչ էլ գիտության պատմության մեջ (պոստպոզիտիվիստական կրիտիցիզմ)՝ իրենում ամփոփելով ռեդուկցիայի չենթարկվող որոշ փիլիսոփայական-իմացաբանական բովանդակություն։ Վերջինիս պարզաբանումը թույլ է տալիս բացահայտել իմացաբանությունը «նատուրալիզացնելու» ինչպես նեոպոզիտիվիստական, այնպես էլ պոստպոզիտիվիստական փորձերի անհիմն լինելը, որը հանգեցնում է սահմանների աստիճանական վերացմանը իմացաբանության և փիլիսոփայական գիտության միջև։

Սկեպտիկական փաստարկների էվրիստիկական նշանակալիությունը որոշվում է «պրոբլեմ առաջացնող» ֆունկցիայով, որը տվյալ դեպքում հանգեցնում է այն եզրակացության, որ «գիտության ռացիոնալությունը» ոչ թե դոգմատիկորեն հավատով ընդունվող փաստ է կամ «տվյալ», այլ հիմնավորում պահանջող պրոբլեմ։ Եվ եթե գիտության ռացիոնալության սկեպտիկական քննադատությունն իրականացվում է փիլիսոփայական փաստարկման մակարդակով, ապա տվյալ փաստարկման հերքումը ևս (հետևաբար, գիտության ռացիոնալության հիմնավորումը) չի կարող իրականացվել ոչ մի այլ մակարդակով։ Գիտությունը,— արդյոք մենք այն կդիտենք սինխրոն, թե դիախրոնիկ կերպով, պատմության «ներքին» (ինտերնալիստական), թե «արտաքին» (էքստերնալիստական) տեսանկյունով,— դառնում է միևնույն նյութը, յուրօրինակ «օնտոլոգիայի ռեգիոն», որը ենթադրում է այլ ընտրական փիլիսոփայական կառուցվածքներ։

Հիմքերի ոլորտը և զարգացման ոլորտը միմյանցից անջրպետված չեն անհաղթահարելի պատով։ Տարանջատ միտումներն այդ ոլորտների նկատմամբ փաստորեն անպաշտպան են դառնում սկեպտիկական հարվածների սպառնալիքի առջև։ Ուստի ռացիոնալության պրոբլեմի ճիշտ լուծման ան-

---

22 «Структура и развитие науки...», с. 252.

հրաժեշտ պայմաններից մեկը հիմքերի օբյեկտիվ դիալեկտիկայի և գիտական իմացության զարգացման նույնական վերարտադրությունն է[23]։

Գիտության ռացիոնալության հիմնավորումն անհնար է առանց «ռացիոնալություն» հասկացության փիլիսոփայական-կատեգորիալ իմաստավորման։ Այդ հասկացության բովանդակությունը պատմականորեն փոփոխական է բուն գիտության ոլորտում (հմմտ., օրինակ, ռացիոնալության մասին տարբեր պատկերացումները «կլասիկ» և «պոստկլասիկ» գիտության մեջ)։ Դրա հետ մեկտեղ այն տիպոլոգիական առումով բազմազան է՝ դրսևորվելով հոգևոր և պրակտիկ գործողության այլ ձևերի մեջ։ «Ռացիոնալություն» կատեգորիայի փիլիսոփայական վերլուծությունը բացում է նոր «պրոբլեմային հորիզոն», որտեղ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում ռացիոնալության հետ հարաբերակցվող «իռացիոնալության», «ճշմարտության», «հակասության», «նպատակի», «գիտականության», «արժեքավորության» և այլ կատեգորիաների վերլուծությունը[24]։

Մատերիալիստական դիալեկտիկայի տեսակետից ռացիոնալության բարձրագույն ձևը, որի կրողը գիալեկտիկական բանականությունն է, պայմանավորված է նրա իմանենտ քննադատականությամբ և գիտականությամբ, գեպի այլ ոլորտ, գործնականի ոլորտը մշտապես դուրս գալով, «գործի տրամաբանության» մեջ մարմնավորվածությամբ։ Ռացիոնալության պրոբլեմի մարքսիստական լուծման պարադիգման Կ. Մարքսի 11-րդ թեզիսն է Լ. Ֆոյերբախի մասին. «Փիլիսոփաները միայն տարբեր կերպով են բացատրել աշխարհը, բայց խնդիրն այն փոխելն է»[25]։ Տվյալ դեպքում խոսքը ոչ թե ամեն տեսակ «փոփոխման» մասին է, ինչպես հակված են կարծելու բուրժուական որոշ փիլիսոփաներ, որոնք սխալ կերպով նույնացնում են մարքսիզմը և պրագմատիզմը, այլ միայն այնպիսի փոփոխման, որը մարմնավորվում է «գործի տրամաբանության» մեջ՝ դիալեկտիկական բանականության համապատասխան, որոնք նույնականորեն են ըմբռնում աշխարհը։ Այսպիսով, «ռացիոնալության» պրոբլեմի մարքսիստական լուծման հիմքերն իրենց մեջ ամփոփում են իմացական և արժեքային տեսանկյունների միասնությունը, դրանք ուղղելով հասարակական իրականության պրակտիկ-առարկայական վերափոխմանը՝ մարդկության տեսականորեն հիմնավորված իդեալներին համապատասխան։

РАЦИОНАЛЬНОСТЬ НАУКИ КАК ФИЛОСОФСКАЯ ПРОБЛЕМА

ГЕНРИХ ГРИГОРЯН

Резюме

В последние годы среди исследований в области философии и методологии науки заметное место занимает проблема рациональности

---

23 В. И. Метлов, Диалектика оснований и развития научного знания («Вопросы философии», 1976, № 1).

24 А. Богомолов, Диалектика и рациональность («Вопросы философии», 1978, № 7).

25 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 4։

науки. Одна из главных причин повышенного интереса к этой проблеме обусловлена обострившейся борьбой двух альтернативных доктрин обоснования знания—фундаментализма и фаллибилизма. Результат этой борьбы породил необходимость в концептуальной дифференциации понятий «научности» и «рациональности», в постановке проблемы рациональности самой науки.

Следует выделить три основные концепции рациональности («традиционная», «аналитическая» и «критическая»). Ссылки на науку в критическом рационализме сами по себе не в состоянии оправдать ее рациональность и спасти от скептических нападок. Обоснование рациональности это философская проблема, которая не может быть решена ни на каком ином (нефилософском) уровне.